



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2023 թվականի N 2342 - Ա

«ՔՐԱՈՒԴ ԷՖՖՈՐԹ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը
ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ «Քրաուդ Էֆֆորթ դեվելոփմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ներդրող) կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում նախատեսվող կառուցապատման ներդրումային ծրագրին (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) ծրագիրն իրականացվելու է համաձայն NN 2, 3 և 4 հավելվածներով նախատեսված՝ Տիգրան Պետրոսյան փ. 81/2 և Դավթաշեն, 2-րդ թաղամաս 26/13

հասցեներում գտնվող՝ 01-004-0001-0084 և 01-004-0001-0130 կադաստրային ծածկագրերով (N 27112019-01-0013 և N 30122020-01-0373 վկայականներ) հողամասերում և հարակից հողամասերում.

2) ծրագրի շրջանակներում ներդրողի կողմից պետք է ապահովվեն նաև Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում Տիգրան Պետրոսյան փ. 81/2 և Դավթաշեն, 2-րդ թաղամաս 26/13 հասցեներում «Ասիամեգաստոյ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) կողմից ձախողված կառուցապատման ծրագրից տուժած անձանց գույքային կորուստները:

3. Համաձայնություն տալ Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում գտնվող՝ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող շուրջ 6929,24 քառ. մ ընդհանուր մակերեսով հողամասերն այդ տարածքում առկա բարձրավոլտ լարերի տեղափոխումից հետո՝ սույն որոշումնր ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի ձևով օտարել ներդրողին՝ համաձայն N 5 հավելվածի:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Երևան համայնքում «Քրաուդ Էֆֆորթ Դեվելոպմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման նպատակով «Քրաուդ Էֆֆորթ Դեվելոպմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հողամասի ուղղակի վաճառքի գործարքի հիմնական պայմանները՝ համաձայն N 5 հավելվածի:

5. Երևանի քաղաքապետին առաջարկել՝

1) ներդրողի հետ կնքել սույն որոշման 3-րդ կետով նախատեսված հողամասերի ուղղակի վաճառքի ձևով օտարման պայմանագիրը՝ հիմք ընդունելով սույն որոշման N 5 հավելվածով հաստատված պայմանները.

2) ապահովել ներդրողի կողմից ներկայացվող ծրագիրը որպես ձախողված կառուցապատման ծրագրի հետ միասին մեկ միասնական համալիր քաղաքաշինություն հաստատելու, ծրագրի հարաչափերին համապատասխան նախագծման թույլտվությունները և բնակելի թաղամասի գլխավոր հատակագիծը համաձայն N 3 հավելվածի տրամադրելու հարցում.

3) ներդրողի հայտի հիման վրա ապահովել ընթացիկ և հետագա անհրաժեշտ քաղաքաշինական փաստաթղթերի (նախագծերի միջանկյալ համաձայնեցումներ, շինարարության թույլտվություններ), անհրաժեշտության դեպքում նաև փուլային եղանակով, քանդման թույլտվությունների, ավարտական ակտերի, շահագործման թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրումը, ինչպես նաև այլ անհրաժեշտ գործողությունների իրականացումը, տրամադրված փաստաթղթերի վերահամաձայնեցումներն ու ժամկետների երկարաձգումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետների պահպանմամբ:

6. Պետական կառավարման համակարգի մարմիններին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում ձեռնարկել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները՝ անհրաժեշտության դեպքում ապահովելով ներդրողի հետ համագործակցությունը:

7. Սահմանել, որ սույն որոշմամբ նախատեսված համապատասխան պայմանագրերի նոտարական ձևակերպման, հողամասերի նկատմամբ իրավունքի (սեփականության կամ այլ) փոխանցման պետական գրանցման և հողամասերի չափորոշիչների ճշգրտման հետ կապված ծախսերն իրականացվելու են ընկերության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան